

գալով մեզ կաշառում, կուրացնում է: Այլ վճիռ ունենք երբ կամքի սրակական մասն ենք ընդունում—մարդիկ պէտք է գործողութեան սլզբնապատճառը որտենին մի վճիռ կարդալիս, իսկ այդ տարաբազումար մեծ մասին պակասում է, շատ քչերին է յատուկ այդ ձեզ: Նորա շլանում, խարւում են արտաքին տեսքից, չեն լժափանչ ցում էականի մէջ, Ահա այստեղից է յառաջանում այն սխալ քննութիւնները, թէ սովորական կեանքի և թէ բանաստեղծութեան մէջ:

Սահմանական մ. ժ. Սահմականց.

(Եարունակելի):

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

David der Philosoph, von Dr. Missak Khostikian,  
Bern. 1907.

Դաւիթ Փիլիսոփայ. Դր. Միսակ Խոստիկան, Բեռն,  
1907 թ.

Վերջին տարիներու Դաւիթ Փիլիսոփայի անձնաւորութիւնն ու երկերը առանձին ուսումնասիրութեան նիւթ են գարձել հայ և օտար բանասէրների կողմից. վերջնականապէս արգէն լուծուած պէտք է համարել այն հարցը, որ Դաւիթ Ա. Մահակի և Մեսրոպի աշակերտ լինել չի կարող և թէ այն աւանդութիւններն ու առասպելները, որոնք կազմուած են նորա անձնաւորութեան շուրջը, ուշ ժամանակի արդիւնք են և զուրկ պատմական աղքիւր համարուելու արժանաւորութիւնից, Եւրոպական գիտնականների մէջ արգէն ընդունուած կարծիք էր, թէ Դաւիթ Զ. գարու անձնաւորութիւն կարող է լինել և ոչ նորա-

նից առաջ։ Այս եղբակացութեան էր հասել և ոլ. Մանանգեան իւր «Դաւիթ» անյաղթի խնդիրը նոր լուսաբանութեամբ»<sup>4)</sup> վերնագրով տետրակի մէջ։ Նոյն խնդրով է զրագւում և ճեմարանի նախկին սահ և այժմ ուսուցիչ երիտասարդ պ. Մ. Խոստիկեան։ Նորա գրքոյկը, որ բաղկացած է երեք գլուխներից և ընդամենը 80 երես է, շատ կարեոր տեղ կը ունի Դաւիթ փիլիսոփայի անձնաւորութեան և երկերի ուսումնասիրութեան պատմութեան մէջ։

Առաջին գլուխ մէջ հեղինակը յիշում է այն բոլոր աղբիւրները, որոնք որ և է տեղեկութիւն ևն տալիս մեր փիլիսոփայի մասին և գալիս է այն եղբակացութեան, որ նորա անուան շուրջը կազմուած բոլոր աւանդութիւնները ծագել են Ժ. և հետեւեալ գարերում։ Ոչ Խաչի ճառը և դորա հետ կապուած Դիւտի նամակագրութիւնը, ոչ Մովսէս Խորենացու և Դաւիթ անյաղթի անուան հետ կապուած առասպելախառն վիճաբանութիւնները Պօլսում կայսեր ներկայութեամբ կամ նրանց ճանապարհորդութիւնները ինքնըստեան պատմական ազբիւր չեն կարող լինել փիլիսոփայի անձնաւորութիւնը պարզելու համար։ Նոյն եղբակացութեան հասել ենք և մենք «Դաւիթ փիլիսոփայ (Հարքացի)» ուսումնասիրութեան մէջ, որի Ա. - է. պրակինները հրատարակուած են «Արարատի» Յունուար և Մարտ տետրակինների մէջ։ Բայց հեղինակը առանձին նշանակութիւն է տալիս այս հակաճառութեան վերջում դրուած յիշատակարանին և կարծում է, որ այնտեղ պահուած է «Դիրք էակաց»-ի թարգմանութեան տարեթիւը։ «Դիրք էակաց»-ը Դաւթի անունով մնացած փիլիսոփայական հարց ու պատասխան է, որ ցրուած է այս հակաճառութեան մէջ, կայ և առանձին Բայց ոչ այլ ինչ է այն, քան քաղուացքներ Սահմանաց գրքից։ Այս հանգամանքը և Գանձակեցու «զգիրս սահմանաց և էակաց» գարձուածը հիմք է համարում ենթադրելու, որ Սահմանաց գիրքը առաջ

<sup>4)</sup> Վաղարշապատ, 1904:

կոչում էր «Գիրք էտկաց», Ուրեմն և վերոյիշեալ հակառակութեան վերջում գտնուած յիշատակարանը պատմական տեղեկութիւն է տալիս Սահմանաց գրքի թարգմանութեան ժամանակի մասին, Ընթերցողների դիւրութեան համար մէջ բերենք այդ յիշատակարանը, որ բազմաթիւ փոփոխակներ ունի շատ կամ քիչ տարբերութիւններով. . . . «Ա իբրև Աստուած հասոյց մեզ ի ժամանակս յայս, յորում է. Էր թուին հայոց: Ես Գուրգէն քարտուղար հայոց մեծաց և սուրբ թագաւորացն պուղոյ սպաթար ստացող եղէ գրոց այսմ: Բայց զարմանալի է ինախնեյ իշատակարանի գրոց այսմիկ, եթէ գրեցաւ գերբու այս էտկըս հրամանաւ թարգմանեալ ի յունաց ի հայս տեառն Յովհաննիսի հայոց կաթուղիկոսի Գաբեղինացւոյ ի իւ (Սրուանձտեան իէ) թուականութեան հայոց: Վկայ է այսմիկ Սարգիս արարացի եղիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ»:

Պ. Խոստիկեանը ինքն էլ նկատում է, որ յիշատակարանի մէջ յիշուած պաշտօնը (Գուրգէն քարտուղար հայոց մեծաց և սուրբ թագաւորացն պուղոյ սպաթար—որոտոսπամքրուս) 628 թուին Հայտատանում լինել չէր կարող, այլ Բագրատունեաց վերջին շրջաններում միայն եւ յիշրաւի Գրիգոր Մագիստրոս իւր «առ հայր Սոսթենէս (Մարմաշենի) յաղագս սոկի մատանւոյն» թղթի մէջ գործ է ածում այդ բառը: Հակաճառութեան ամբողջ բովանդակութիւնն էլ յարմար է գալիս Բագրատունեաց շըրջանի հայ-յունական վէճերին: Որ այստեղ կեղծիք կայ, պարզ է, Այս բոլորի հետ պ. Խոստիկեանը համաձայն լինելով, անհասկանալի է, թէ ինչու նա վաւերական է համարում յիշատակարանի վերջին մասը: Շատ ձգձգուած և անհաւանական ենթագրութիւն է, որ այդ յիշատակարանը եղել է երբեմն Սահմանաց գրքի տակ, Սահմանաց գիրքն էլ առաջ էտկաց գիրք է կոչուել, բայց երբ յետին գարերում Սահմանաց գրքից հարց ու պատասխանով մի գարոցական գիրք է կազմուել, յիշատակարանը մնացել է դասագրքի տակ, իսկ բուն թարգմանութեան տակից ջնջուել է այն, Եթէ այդ յիշատակարանը գրուած լինէր արդարի 576-8 թուին, թարգմանչի ձեռքով, անկարելի է, յիշատակութիւն շլինէր հրամայող կաթուղիկոսի մահուան մա-

սին։ Եւ ապա, ինչ նշանանութիւն ունի այդաեղ արտբացի Սարգիս եպիսկոպոսի վկայութիւնը։ Հենց այդ նախադաւ առնթիւնը ինքնը ստիճանքան կանկած է յարուցանում, որ յիշատակարանի հեղինակը կամենումէ ծածկել իւր կեղծ ծիքը և վաւերականութեան ձեւ տալ։ Այսպիսով ուրեմն պլ. Խոստիկեանի պատճառարանութիւնը Դաւիթի փիլիսոփայի Սահմանաց գրքի թարգմանութեան ժամանակի մաս սին համարում ենք չապացուցուած։ \*)

Պ. Խոստիկեանի հետ համաձայն չենք նաև Դաւիթ Հարքացու ժամանակի վերաբերութեամբ։ Նա ոչ թէ վեցերորդ, այլ է, դարու անձն է, ինչպէս մենք ցոյց ենք տուել «Դաւիթ փիլիսոփայ» վերնագրով յօդուածի մէջ և աւելի կապարզենք հետզհետէ մեր աշխատութեան ընթացքում։ Այս երկու կետն էլ կազմում են պլ. Խոստիկեանի աշխատութեան թոյլ կողմը։

Բուն աշխատութեան կեդրանը երկրորդ գլուխն է և մասամբ երրորդ, ուր հեղինակը փութաջան աշխատութիւն է ցոյց տալիս և քննագատական սրամութիւն։ Հայերէն բնագիւն արդէն յունարէն թարգմանութեան կնիք էր կրում, բայց գիտնականների մէջ տարածայնութիւն կար վերջնական եղբակացութեան վերաբերութեամբ։ Դաւիթի անունով մեզ հասած երկերից մի քանիսը կան և յունարէն, ինչպէս Սահմանաց դիրքը և Պորֆիրի ներածութեան մեկնութիւնը։ Մխիթարեանների հետ երառպացի գիտնական ներյան կարծում էր, որ մի և նոյն հեղինակը՝ Դաւիթ՝ իւր երկերը գրել է երկու լեզուով՝ հայերէն և յունարէն։ Իսկ կոննիբիր կարծում էր, որ Դաւիթը գրել է հայերէն, իսկ մի ուրիշը թարգմանել է յունարէն։ Վերջապէս Բուսէի կարծիքով, Դաւիթը գրել է հայերէն, իսկ նորա աշակերտներից մէկը ուսուցչի յու-

\*) Տարաբաղդաբար այս յիշատակարանին կարևոր նշանակութիւն են տուել A. Baumgartner և Connybeare, առաջինը Պիտոյից գրքի ուսումնասիրութեան մէջ, իսկ երկրորդը Դաւիթ անցազթիւ։

նարէն գասախօսութիւններից կազմել է յունարէնը: \*)  
Դաւիթ Թեսազնիկեցու կետնքը հրատարակող Ռողէ,  
որ նրան նոյնացնում է մեր փիլիսոփայի հետ բնագիրը  
հայերէնն է ընդունում \*\*), Միայն Մանանդեանն էր, որ  
հայերէնը թարգմանութիւն է համարում:

Պ. Խոստիկեանը այս կնճռոտ խնդիրը պարզելու հաս-  
մար ուղիղ ճանապարհն է ընտրել, յունարէնն ու հայե-  
րէնը համեմատելով միմեանց հետ, և եկել է այն հաս-  
տատուն եղրակացութեան, որ հայերէնը պարզ թարգ-  
մանութիւն է յունարէնից Թարգմանութեան լեզուն ամ-  
բողջապէս յունարէնի վերայ ձևած հայերէն է, ինչպէս  
Թրակացու քերականութեան թարգմանութեան վերաբե-  
րութեամբ ցոյց է տուել Մարքս Կաւելացնենք, որ այս  
հայերէնը յատուկ է առհասարակ հելենասէրների ամ-  
բողջ գործին, օր. Ստ. Սիւնեցուն և Գաւիթ հիւստին:  
Այս երկոյթը բացատրել փիլիսոփայական բառերի և  
մոքերի աղքատութեամբ հայերէնի մէջ (Զարբանալեան)  
անհիմն է. ընդհակառակ թարգմանիչը շատ լաւ պէտք է  
տիրապետէր հայոց լեզուին, որ այնպէս ստրկաբար թարգ-  
մանել կարողանար, բառ առ բառ, հետևելով միշտ յուշ-  
նարենի կազմութեան և գասաւորութեան: Թարգմանու-  
թիւնը այնքան ստրկաբար է և նիւթական, որ որոշում  
է, թէ թարգմանիչը հետեւ է Vaticanus 1470 օրինակին:  
Հեղինակը իւր համեմատութիւնը կատարել է Բուսէի հրա-  
տարակած յունարէն բնագրի հետ †): Սահմանաց գիրքն  
ու Պորֆիրի ներածութիւնը համեմատում է մանրամաս-  
նութեամբ, իսկ ներածութեան մեկնութեան մէջ ցոյց է  
տալիս միայն յունարէնի ընդարձակ յաւելումները:

Համեմատութիւնը պարզել է և մի ուրիշ խնդիր:

\*) Die neuplatonischen Ausleger der Isagoge des Porphyrius, Berlin 1892.

\*\*) Leben des heiligen Devid von Thessalonike, Berlin, 1887.

†) Davidis Prolegomena et in Porphyrii isagogen Commen-  
tarium, Berolini, MCMIV.

Յունարէնը տեղ տեղ աւելի ընդարձակուած է նախադասութիւններով և հատուածներով, այն ինչ հայերէնն աւելի ամբողջ է: Ընդարձակութիւնն աւելի նկատելի է ներածութեան մեկնութեան մէջ, երբեմն այնպիսի մեծ տարբերութեամբ, որ բառացի համեմատութիւնն անկարելի է: Տարբեր են նոյնպէս վերնագիրները, այս խնդրի բացատրութեան մէջ հեղինակը մօտենումէ Բուսէին, տարբերութիւնները Դաւթի աշակերտի գործը համարելով, որ իւր ուսուցչի դասախոսութիւններից է կազմել ներկայ յունարէն ընագիրը \*): Սակայն պ. Խոստիկեան համամիտչէ Բուսէի այն կարծիքին, թէ Դաւթ նախ հայերէն է գրել և ապա յունարէն դասախոսել: Թէ յունարէն ընագիրը Փիլիսոփայի դասախոսութիւններից են մշակուած, ապացոյց և՝ Առօ Փօնչ Ճշճն խօսքերը վերնագրում: Յաւելումները աշակերտինն են. յատկապէս Պորփիրի ներածութեան մեկնութեան մէջ աշակերտն աւելի է մշակել, աւելացնելով ոչ միայն նախադասութիւններ, այլ և մեծ ու փոքր հատուածներ, նոյն իսկ գլուխներ, քաղելով նոյն նիւթի ուրիշ մեկնութիւններից: Երբեմն էլ կրծատումներ է արել:

Իսկ հայերէնը թարգմանուած է ոյնպիսի մի օրինակից, որ մշակութեան չէր ենթարկուել աշակերտի կողմէ, թէպէտ հայերէն թարգմանութեան ընագիրն էլ Փիլիսոփայի դասախոսութիւններից է կազմուած: Գլուխները բաժանուած են դասերի համեմատ և գուցէ հէնց Դաւթի գործն է այդ: Փիլիսոփան հաւանօրէն դասախոսուել է Աղէքսանդրիայում Զ. դարում և մի հայ աշակերտ հայերէնի է Փոխադրել այն: Սակայն այդ Դաւթիթը Հարքացին չէ, սորա «Որ իմաստասիրական և յիմաստասիրելի հարցուածո» գրութեան մաքերը հակառակ են Սահմանաց գրքի գաղափարներին, ինչպէս ցոյց է տուել և Մանանդեան: Փիլիսոփայ Դաւթիթը հեթանոս է և ոչ հայ, այն ինչ Հարքացին քրիստոնեայ է և հայ: Այն նշանները,

\*.) Die nenplat. Ansleger Եթ. 19:

որոնք հիմք կարող էին լինել հեղինակի հայ լինելն ապացուցանելու, ներմառմութիւն են կամ բացատրութիւններն որինակ. հայ բնագրի մէջ 198 եր. (Վենետիկ 1833) յիշուած է 8իգրան անունը, բայց յունարէնի մէջ 62, 20 գորա փոխարէն "Σκτօρ անունը: Ընդհանրապէս մեր փիլիսոփայի գրուածների մէջ հայ մարդու կամ արևելցու աշխարհահայեացք չի նկատվում, այն ինչ շատ յաճախ յեզյեղուում են յունաց աստուածների և փիլիսոփաների անունները և գիցարանական աւանդութիւնները:

Բայց ով է թարգմանիչը և երբ է թարգմանուած: Կարող էր թարգմանիչը Դաւիթ Հարքացին լինել, բայց զդուշանում է հեղինակը հայոց աւանդութեան պատմական նշանակութիւն տալ, որովհետեւ Ժ. գարում է ծառ գել այն և կապուել Դաւիթի անուան հետո: Առկայուն հակուած է թարգմանութիւնը Զ. գարում գնել և այն էլ Յովհաննէս Գաբրեղենացու հրամանով, միակ հիմք ունենալով վերոյիշեալ յիշատակարանը, որի արժեքը տեսանք մենք, Կարծում ենք, որ է. գարուց առաջ գնելու այս թարգմանութիւնը ոչ մի հիմք չունինք, իսկ Բ. գարու առաջին քառորդից արդէն վկայութիւններ ունինք Խոսրովիկի թարգմանչի գրութիւնների մէջ:

Թարգմանութեան ժամանակը որոշելուց յետոյ՝ փորձում է պարզել Դաւիթ փիլիսոփայի, բուն հեղինակի ժամանակը: Նա ոչ հայ է և ոչ ե. գարու հեղինակ: Եւրոպացի դիտնականներից սմանք նորան ե. գարու հեղինակ էին համարում և Սիրիանոսի աշակերտ, հիմնուելով Արիստոտելի ստորոգութեանց մեկնութեան վերայ, բայց Ագորֆ Բուսէն այդ Եղիայի գործն է համարում և վերջնիս անունով էլ հրատարակել է \*): Դաւիթ վկայութիւն է բերում և Ոլոմպիստորոսից Ահմանաց զրքում, հայերէնի մէջ երկու, իսկ յունարէնի մէջ մի քանի անգամ: Այս Ոլոմպիստորոսը կրտսերն է, որ Ամսնիոսի

\*) Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria, Beroliui MCM.

աշակերտն էր և գործում էր գեռ հս Զ դարու կեսերին։ Բուսէն իւր նսրագոյն աշխատութիւնների մէջ այն կարծիքն է յայտնում, որ Դաւիթ միջնորդապես միայն Ոլոմպիոդորի աշակերտ էր, իսկ անմիջական աշակերտը Եղիան է, եւ յիրաւի Եղիայի և Դաւթի յունարէն երկերի համեմատութեամբ նա մեծ առընչութիւն է գտել երկուսի մէջ։ Սակայն Հայերէնի մէջ այդ կախման հետքերը չկան, ըստ այ, Խոստիկեանի, և ուրեմն Դաւթի մշտկողը կամ աշակերտը կախում ունի Եղիայից, և ոչ Դաւիթի ինքը։ Այս հիման վերայ հեղինակը հակասակ Բուսէի՝ Դաւթին Ոլոմպիոդորի տնմիջական աշակերտ է համարում, և որպէս յենակեալ յիշում է Մանանդեանի կողմից տռաջին անգամ՝ ուշագրութեան առած այն հանգամանքը, որ Դաւիթ Ոլոմպիոդորից առած վկայութեան համար «ասէր» և «ասաց» ձեւերն է գործածում, այն ինչ միւս փիլիսոփաների համար ներկայ ժամանակը Ըստ այսմ՝ Դաւիթին էլ 550—560 թուականների մարդ է, ուրեմն և տարբեր Դաւիթ Թեսազնիկեցուց ( $+530-535$  թ.), որին Իոզէ նոյնացնում է մեր փիլիսոփայի հետ, որովհետև Ոլոմպիոդորը 527 թուից առաջ գոշծում էր Աղեքսանդրիայում և ապրում էր գեռ 564 թուին։ Բայց Մանանդեանն ինքը խոսանվանում է իւր պատճառաբանութեան թուլութիւնը։ Այս բոլորից մի բան միայն կարելի է հաստատ ասել, որ մեր փիլիսոփան Ոլոմպիոդորից յետոյ էր ապրում։

Երբայր գլխի մէջ ալ, Խոստիկեան վերլուծումէ Դաւթի երկերը (Մահմանքը, Պորֆիրի ներածութիւնը և մեկնութիւնը) և որոշում է նրանց արժէքը փիլիսոփայութեան պատմութեան մէջ։ Նա ինքնուրոյն փիլիսոփայոյ չէ իսկական մտքավ, այլ հետեւզ Պորֆիրից յետոյ եկող Ամանիս, Ոլոմպիոդոր և ին փիլիսոփաններին, որոնց երկերից և բանաքաղութիւններ է անում։ Նա փիլիսոփայութեան ուսուցիչ էր, որ իւր գասախօսութիւնների նիւթը քաղում էր նախորդներից, յատկապէս նմանում է Ամոնիսին։ Միայն Դաւիթն առելի շատախօս է, ճուռմ, ձեական և թուերի խորհրդաւորութեան հետեւզ։ Ինչ

հասարակաց է Դաւթին և Եղիային, վերագրում է Ալուշ-  
պլոտորին, որ հեղինակի կարծիքով երկուսի ռւսուցիչն էր:  
Նարագրութեան ընդհանուր տպաւորաթիւնը լաւ  
է և ապացոյց կարող է լինել հեղինակի աշխատասեր,  
որամիտ և քննադատական ոգու յատկաւթեան: Տեղ տեղ  
եղած կրկնութիւնները խանդարում են փոքր ինչ գործի  
ամբողջութիւնը, բայց չեն նսեմացնում նորա արժէքը:  
Ցանկանը և յուսանք, որ նա այդպիսի շատ նուէրներ  
ձգէ մեր բանասիրական գրականութեան աղքատիկ գան-  
ձանակի մէջ:

Գ. Վ. Օպվուժիան



Հաշիւ Նոր Նախիջեւանի նայազգի աղքատաց եկեղե-  
ցական հոգաբարձութեան՝ 1906 թ. գործունեութեան.

Նոր Նախիջեանը իրաւամբ կարող է պարծենալ իր  
կրթական և բարեգործական հաստատութիւններով. վեր-  
ջինների թուին է պատկանում նաև նրա Աղքատաց Հո-  
գաբարձութիւնը, որը անցեալ տարի բոլորեց իր 17 ա-  
մեակը: Այս հոգաբարձութիւնը հիմնուած է Պոլոյեի  
յայտնի յօդուածի հիման վերայ, որը իրաւունք է տալիս  
մեր Եկեղեցիներին կից հիմնել բարեգործական նպատա-  
կով հոգաբարձութիւններ, անկելանոցներ և այլն: Անհաս-  
կանալի է, ինչու մինչև այժմս մեր ծխականները չեն  
օգտուել այդ իրաւունքից և չեն ծածկել մեր երկիրը  
այդպիսի բարեգործական հաստատութիւնների ցանցերով:  
Նոր Նախիջեանի Եկեղեցական աղքատաց հոգաբար-  
ձութիւնը մեր ազգային ամենահարուստ և արդինաւէտ  
հիմնարկութիւններից մէկն է: Առ 1 յունուարի 1907 թուի  
ունեցել է 786,120 ր, 98 կ.—ի փող, արժեթղթեր, շար-  
ժական և անշարժ կայքեր: Այս բոլոր ստացուացքներից